«Գյումրու ուռուցքաբանական դիսպանսեր» ՓԲԸ-ի
կարիքների համար տնտեսական և լվացքի պարագաներ ձեռքբերման

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N *ԳՈՒԴ-ՄԱ-ԱՊՁԲ 20-Մ/3*

«25» մարտ 2020թ.

ք. Գյումրի

«Գյումրու ուռուցքաբանական դիսպանսեր» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Վ.Շիրինյանի, որը գործում է «Գյումրու ուռուցքաբանական դիսպանսեր» ՓԲԸ» կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և Ա/Ձ Ռոմիկ Պողոսյանը, ի դեմս Ռ.Պողոսյանի (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են ___5___ օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 389550 /երեք հարյուր ութսունինները հազար հինգ հարյուր հիսուն ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[1]: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու

---

[1] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Պայմանագրի գնից՝ մինչև _____ ՀՀ դրամը, Գնորդը փոխանցում է Վաճառողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ[2]:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված _____ օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները[3]:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության _____2____ օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված __3__ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

---

[2] *Վաճառողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Գնորդի և Վաճառողի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:*

[3] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց:Իսկ եթե գնվելիք ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխքային ժամկետը չպետք է պակաս լինի 365 օրացուցային օրից*

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[4]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[5]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

---

[4] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

[5] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում[6]:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները[7]:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:[8]

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

---

[6] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[7] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

[8] *Եթե պայմանագիրը կնքվում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերության հիմքով, ապա սույն կետից հանվում է 2-րդ նախադասությունը:*

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Գյումրու ուռուցքաբանական դիսպանսեր» ՓԲԸ	Ա/Ձ « Ռոմիկ Պողոսյան»
Հասցե՝ ք. Գյումրի, Վ.Սարգսյան 25ա	Հասցե՝ ք.Գյումրի, Անի թաղ, 7 փողոց 6/1ա շենք
Բանկ՝ «Հայէկոնոմբանկ », Գյումրիի մ/ճ	Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 163128117476	Հ/Հ 1150007400490403
ՀՎՀՀ 05502356	ՀՎՀՀ 57218676
oncodisp68@gmail.com	asyapetrosyan0@gmail.com
Հեռ. (0312) 3-49-50	Հեռ. (+374) 94821221
---------- (ստորագրություն)	---------- (ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
« 25 » մարտ 2020 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը**	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման	
								հասցեն	ենթակա քանակ
1.	31531210	Էլեկտրական լամպ 100W	Էլեկտրական լամպ (220-230) Վ լարման, 50 Հց հաճախականության, 100 Վտ հզորությամբ, թափանցիկ, տանձաձև կամ սնկաձև, կոթառը E 27/27 տիպի, ԳՕՍՏ 2239-79 կամ համարժեք: Անվտանգությունը՝ ըստ ԳՕՍՏ 28712-90 և ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված ,Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի	հատ	100	25000	**250**	Շիրակի մարզ, ք. Գյումրի, Վ.Սարգսյան 25ա	Ամսական՝ ըստ Պատվիրատուի պահանջի
2.	39831245	Օճառ, հեղուկ	Բարձր տեսակի մաքուր ճարպից, չոր և յուղոտ մաշկի համար հակամանրե օճառ, 250մլ-ոց թափանցիկ պլաստիկատե տարաներով, բուրավետ, pH նեյտրալ միջավայրով, չի գրգռում մաշկը, պարունակում է խմելու ջուր, լաուրիլսուլֆատ նատրիում,նատրիումի քլորիդ, գլիցիրին, բետաին,կիտրոնաթթու, պարֆյումերային կազմ, սննդային ներկ, նատրիումի բենզոնատ	հատ	350	21000	60		
3.	39831241/4	Օճառ լվացքի	Լվացքի օճառ	հատ	160	32000	200		
4.	39831241/1	Օճառ ձեռքի	Ձեռքի օճառ 100 գ-ոց	հատ	100	20000	200		
5.	39831242	լվացքի փոշի	Մաքրող փոշի լվացքի համար, ստվարաթղթե կամ պոլիէտիլենային տուփերով, հատիկավորված, սպիտակ գույնից մինչև բաց դեղին կամ գունավորված, բարձր որակի՝ նախատեսված ձեռքի լվացքի համար,	կգ	650	52000	80		
6.	39831250	Սպիտակեցնող միջոց (ժավել)	սպիտակեցնող և ախտահանիչ հատկություններով հեղուկ տարաներով	լիտր	100	20000	200		
7.	39831280	Ապակի մաքրելու միջոց	Մաքրող միջոց ապակե մակերևույթների համար, փոշեցրիչով, առնվազն 500 մլ:	հատ	300	9000	30		
8.	39514300	Սրբիչներ՝ գլանի վրա	Թղթյա սրբիչներ OfficeClean կամ համարժեք, երկշերտ սպիտակ գույնի ոչ պակաս 200 հատ,	հատ	280	28000	100		

			չափը ոչ պակաս 225մմ * 210մմ:						
9.	39812410	Փայլեցնող միջոցներ փայտյա կահույքի համար	Փայլեցնող միջոց փայտյա կահույքի համար, աերոզոլային փաթեթվածքով	հատ	500	17500	35		
10.	39831283	Հատակի լվացման լաթ	Հատակ մաքրելու շոր, տրիկոտաժային կամ հյուսվածքային բամբակյա հումքից, չափը առնվազն 80*100սմ	հատ	650	26000	40		
11.	39812600	Մաքրող մածուկներ և փոշիներ	Կապույտ գունավորած հատիկավոր փոշի, փոշու զանգվածային մասը ոչ ավել 5 %, pH-ը՝7,5-11,5, ֆոսֆորաթթվական աղերի զանգվածային մասը ոչ ավել 22 %, փրփրագոյացման ունակությունը (ցածր փրփրագոյացնող միջոցների համար) ոչ ավել 200 մմ, փրփուրի կայունությունը ոչ ավել 0,3 միավոր, լվացող ունակությունը ոչ պակաս 85 %, սպիտակեցնող ունակությունը (քիմիական սպիտակեցնող նյութեր պարունակող միջոցների համար) ոչ պակաս 80 %:	հատ	370	22200	60		
12.	39224430	Մոմեր	Բարակ չապի, տուփ 100 հատ	հատ	3000	1500	5		
13.	39221410	ավելներ	Սենյակի հատակը մաքրելու համար, բարձր որակի, բնական, տեղական արտադրության, առավելագույն երկարությունը՝ 90 սմ, ավլող մասի առավելագույն լայնքը 40 սմ:	հատ	1200	30000	25		
14.	39839200	Գոգաթիակ աղբը հավաքելու համար	գոգաթիակ, պլաստմասե,աղբը հավաքելու համար : Տարողունակ գոգաթիակ առնվազն 27սմ *23 սմ	հատ	150	2250	15		
15.	33761100	Զուգարանի թուղթ	Երկշերտ կամ եռաշերտ, ոչ պակաս 9,8սմX12,5սմ, առնվազն 150 թերթիկ, երկ. ոչ պակաս 18,75մ, պատրաստված գրելու թղթից, լրագրաթղթից և այլ թղթերի թափոններից, թույլատրված սանիտարահիգիենիկ նշանակության ապրանքներ պատրաստելու համար: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006 թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշմամբ հաստատված "Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի":	հատ	90	18000	200		
16.	39351100	Կոյուղի մաքրելու հեղուկ	Կոյուղի մաքրելու հեղուկ կամ համարժեք <<Կրոտ>>	հատ	900	22500	25		
17.	39298300	Ծաղկաման	Ծաղկաման 15*18սմ	հատ	1000	5000	5		
18.	39835000	Հատակը լվանալու փայտ3500	Հատակը լվանալու փայտ, հատ	հատ	850	5950	7		
19.	19641000	Պոլիէթիլե-8200նային պարկ,	Աղբի պոլիէթիլենային տոպրակներ, սև գույնի, 30լ տարողությամբ /40x90/ սմ, աղբը	հատ	35	3500	100		

			չափը ոչ պակաս 225մմ * 210մմ:						
9.	39812410	Փայլեցնող միջոցներ փայտյա կահույքի համար	Փայլեցնող միջոց փայտյա կահույքի համար, աերոզոլային փաթեթվածքով	հատ	500	17500	35		
10.	39831283	Հատակի լվացման լաթ	Հատակ մաքրելու շոր, տրիկոտաժային կամ հյուսվածքային բամբակյա հումքից, չափը առնվազն 80*100սմ	հատ	650	26000	40		
11.	39812600	Մաքրող մածուկներ և փոշիներ	Կապույտ գունավորած հատիկավոր փոշի, փոշու զանգվածային մասը ոչ ավել 5 %, pH-ը՝7,5-11,5, ֆոսֆորաթթվական աղերի զանգվածային մասը ոչ ավել 22 %, փրփրագոյացման ունակությունը (ցածր փրփրագոյացնող միջոցների համար) ոչ ավել 200 մմ, փրփուրի կայունությունը ոչ ավել 0,3 միավոր, լվացող ունակությունը ոչ պակաս 85 %, սպիտակեցնող ունակությունը (քիմիական սպիտակեցնող նյութեր պարունակող միջոցների համար) ոչ պակաս 80 %:	հատ	370	22200	60		
12.	39224430	Մոմեր	Բարակ չապի, տուփ 100 հատ	հատ	3000	1500	5		
13.	39221410	ավելներ	Սենյակի հատակը մաքրելու համար, բարձր որակի, բնական, տեղական արտադրության, առավելագույն երկարությունը՝ 90 սմ, ավլող մասի առավելագույն լայնքը 40 սմ:	հատ	1200	30000	25		
14.	39839200	Գոգաթիակ աղբը հավաքելու համար	գոգաթիակ, պլաստմասե,աղբը հավաքելու համար : Տարողունակ գոգաթիակ առնվազն 27սմ *23 սմ	հատ	150	2250	15		
15.	33761100	Զուգարանի թուղթ	Երկշերտ կամ եռաշերտ, ոչ պակաս 9,8սմX12,5սմ, առնվազն 150 թերթիկ, երկ. ոչ պակաս 18,75մ, պատրաստված գրելու թղթից, լրագրաթղթից և այլ թղթերի թափոններից, թույլատրված սանիտարահիգիենիկ նշանակության ապրանքներ պատրաստելու համար: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006 թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշմամբ հաստատված "Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի":	հատ	90	18000	200		
16.	39351100	Կոյուղի մաքրելու հեղուկ	Կոյուղի մաքրելու հեղուկ կամ համարժեք <<Կրոտ>>	հատ	900	22500	25		
17.	39298300	Ծաղկաման	Ծաղկաման 15*18սմ	հատ	1000	5000	5		
18.	39835000	Հատակը լվանալու փայտ3500	Հատակը լվանալու փայտ, հատ	հատ	850	5950	7		
19.	19641000	Պոլիէթիլե-8200նային պարկ,	Աղբի պոլիէթիլենային տոպրակներ, սև գույնի, 30լ տարողությամբ /40x90/ սմ, աղբը	հատ	35	3500	100		

		աղբի համար	հավաքելու համար՝ ըստ ԳՕՍՏ 10354-82 կամ համարժեքը:						
20.	39221290	Թեյնիկ	Թեյնիկ էլեկտրական , տարողությունը 1,8լիտր	հատ	8200	8200	1		
21.	39221130	Բաժակ	Բաժակ ապակյա տարողությունը 200մլ	հատ	200	2000	10		
22.	39713500	Արդուկ	Արդուկ էլեկտրական,	հատ	12200	12200	1		
23.	18421130	Ձեռնոցներ տնտեսական	Ռետինե, կենցաղային և խոհանոցային օգտագործման համար:Նախատեսված են բազմակի գործածման համար, չափերը ըստ պատվիրատուի պահանջի, հաստությունը ոչ պակաս 0.6-0.9 մմ, երկարությունը ոչ պակաս 300 մմ:	զույգ	160	3000	20		
24.	39224331	Դույլ պլաստմասե	Պլաստմասե, 8-10 լ տարողության, անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 25-ի N 679-Ն որոշմամբ հաստատված «Սննդամթերքի հետ շփվող պոլիմերային և դրանց հիմքով պլաստմասսայե արտադրանքների տեխնիկական կանոնակարգի»	հատ	550	2750	5		

Գնման առարկայի հատկանիշ բնութագրում չպետք է հղում պարունակի (որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին,ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին): Պարունակելու դեպքում կիրառելի է <<կամ համարժեք>> բառերը:

*** Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ԳՆՈՐԴ

«Գյումրու ուռուցքաբանական դիսպանսեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Գյումրի, Վ.Սարգսյան 25ա
Բանկ՝ «ՀայէկոնոմԲանկ », Գյումրիի մ/ճ
Հ/Հ 163128117476
ՀՎՀՀ 05502356
oncodisp68@gmail.com
Հեռ. (0312) 3-49-50

(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

Ա/Ձ « Ռոմիկ Պողոսյան»
Հասցե՝ ք.Գյումրի, Անի թաղ, 7 փողոց 6/1ա շենք
Բանկ՝ «ՀայբիզնեսԲանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150007400490403
ՀՎՀՀ 57218676
asyapetrosyan0@gmail.com
Հեռ. (+374) 94821221

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 2
<< 25 >> մարտ 2020 թ. կնքված
ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Ապրանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2020 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1	Էլեկտրական լամպ 100W				25000	25000	25000	25000	25000	25000	25000	25000	25000	25000
2	Օճառ, հեղուկ				21000	21000	21000	21000	21000	21000	21000	21000	21000	21000
3	Օճառ լվացքի				32000	32000	32000	32000	32000	32000	32000	32000	32000	32000
4	Օճառ ձեռքի				20000	20000	20000	20000	20000	20000	20000	20000	20000	20000
5	լվացքի փոշի				52000	52000	52000	52000	52000	52000	52000	52000	52000	52000
6	Սպիտակեցնող միջոց (ժավել)				20000	20000	20000	20000	20000	20000	20000	20000	20000	20000
7	Ապակի մաքրելու միջոց				9000	9000	9000	9000	9000	9000	9000	9000	9000	9000
8	Սրբիչներ՝ գլանի վրա				28000	28000	28000	28000	28000	28000	28000	28000	28000	28000
9	Փայլեցնող միջոցներ փայտյա կահույքի համար				17500	17500	17500	17500	17500	17500	17500	17500	17500	17500

10	Հատակի լվացման լաթ				26000	26000	26000	26000	26000	26000	26000	26000	26000	26000
11	Մաքրող մածուկներ և փոշիներ				22200	22200	22200	22200	22200	22200	22200	22200	22200	22200
12	Մոմեր				1500	1500	1500	1500	1500	1500	1500	1500	1500	1500
13	ավելներ				30000	30000	30000	30000	30000	30000	30000	30000	30000	30000
14	Գոգաթիակ աղբը հավաքելու համար				2250	2250	2250	2250	2250	2250	2250	2250	2250	2250
15	Զուգարանի թուղթ				18000	18000	18000	18000	18000	18000	18000	18000	18000	18000
16	Կոյուղի մաքրելու հեղուկ				22500	22500	22500	22500	22500	22500	22500	22500	22500	22500
17	Ծաղկաման				5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000
18	Հատակը լվանալու փայտ3500				5950	5950	5950	5950	5950	5950	5950	5950	5950	5950
19	Պոլիէթիլե-8200նային պարկ, աղբի համար				3500	3500	3500	3500	3500	3500	3500	3500	3500	3500
20	Թեյնիկ				8200	8200	8200	8200	8200	8200	8200	8200	8200	8200
21	Բաժակ				2000	2000	2000	2000	2000	2000	2000	2000	2000	2000
22	Արդուկ				12200	12200	12200	12200	12200	12200	12200	12200	12200	12200

	Ձեռնոցներ տնտեսական				3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000
24	Դույլ պլաստմասե				2750	2750	2750	2750	2750	2750	2750	2750	2750	2750

ներկայացված է աճողական

ԳՆՈՐԴ

«Գյումրու ուռուցքաբանական դիսպանսեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Գյումրի, Վ.Սարգսյան 25ա
Բանկ՝ «ՀայԷկոնոմբանկ », Գյումրիի մ/ճ
Հ/Հ 163128117476
ՀՎՀՀ 05502356
oncodisp68@gmail.com
Հեռ. (0312) 3-49-50

(ստորագրություն)

Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

Ա/Ձ « Ռոմիկ Պողոսյան»
Հասցե՝ ք.Գյումրի, Անի թաղ, 7 փողոց 6/1ա շենք)
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150007400490403
ՀՎՀՀ 57218676
asyapetrosyan0@gmail.com
Հեռ. (+374) 94821221

(ստորագրություն)

Կ.Տ.